10.04.25 - 11.04.25
09:30
Անցանց
Գրանցումը փակ է
☐

Պահպանել Google օրացույցում
ԵՊՀ ISTC ինովացիոն կենտրոնի դահլիճ

Ս.թ. ապրիլի 10-11-ը՝ ժամը 9:30-ին, ԵՊՀ ISTC ինովացիոն կենտրոնի դահլիճում Միջմշակութային հաղորդակցության անգլերենի ամբիոնի նախաձեռնությամբ կանցկացվի «Մարքեթինգային հաղորդակցություն և գործարար դիսկուրս. հեռանկարներ և մարտահրավերներ» խորագրով սիմպոզիում։

Սիմպոզիումը կհամախմբի մարքեթինգային հաղորդակցության ոլորտի առաջատար մասնագետների, փորձագետների, գիտնականների, ֆակուլտետի շրջանավարտների, ինչպես նաև մագիստրանտների՝ համատեղելու տեսական գիտելիքը, փորձն ու նորարարական մոտեցումները։

Միջոցառման շրջանակում տեղի կունենա նաև «Ինչպե՞ս է ԱԲ-ն փոխում մեր կյանքը» խորագրով պանելային քննարկում, որի շրջանակում ոլորտի առաջատար մասնագետները կներկայացնեն արհեստական բանականության ազդեցությունը մեր առօրյայի, մասնագիտական ոլորտների և համաշխարհային շուկայի վրա՝ բացահայտելով դրա ընձեռած հնարավորություններն ու մարտահրավերները։

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
(+37460) 710000
info@ysu.am